

120 թույլ

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
մարզային փուլ
10-րդ դասարան

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Եկեղեցում օրվա տարբեր ժամերին կատարվող ամենօրյա աղոթքի արարողությունը կոչվում է՝

(0,5 միավոր)

- 1) պատարագ 2) ժամերգություն 3) անդաստան 4) հաղորդություն

2. Քանի՞ գրքից է բաղկացած Նոր Կտակարանը. *(0,5 միավոր)*

- 1) 40 գրքից 2) 27 գրքից 3) 48 գրքից 4) 4 գրքից

3. Քրիստոնեական եկեղեցու առաջին տիեզերական ժողովը տեղի է ունեցել՝

(0,5 միավոր)

- 1) Կոստանդնուպոլսում 2) Եփեսոսում 3) Նիկեայում 4) Քաղկեդոնում

4. Ս.Արիստակես Ա Պարթևը գահակալել է՝ *(0,5 միավոր)*

- 1) 325–333 թթ. 2) 333–341 թթ. 3) 341–347 թթ. 4) 347–353 թթ.

5. Ե՞րբ Անանիա Ա. Մոկացին տեղափոխվեց Արգինայի վանք՝ *(0,5 միավոր)*

- 1) 945 թ. 2) 948 թ. 3) 950 թ. 4) 952 թ.

6. Հայոց ո՞ր կաթողիկոսն է արժանացել «Հայրենասեր» պատվանվանը. *(0,5 միավոր)*

- 1) Խորեն Ա. Մուրադբեկյանը 2) Գևորգ Ե Սուրենյանցը
3) Գևորգ Զ. Չորեքչյանը 4) Մկրտիչ Ա. Խրիմյանը

7. Աղթամարի կաթողիկոսական աթոռը գոյատևել է մինչև՝

(0,5 միավոր)

- 1) 1878 թ. 2) 1895 թ. 3) 1905 թ. 4) 1915 թ.

8. Հայոց եկեղեցին երիտասարդների օրհնության օր է հռչակել

(0,5 միավոր)

- 1) Տյառնընդառաջը 2) Ծաղկագարդը
3) Ավետման տոնը 4) Սուրբ Սարգիս Զորավարի տոնը

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Եկեղեցական ո՞ր արարողության մեջ առանցքային դեր ունի Հաղորդությունը. *(1 միավոր)*

10. Ովքե՞ր են չորս Ավետարանների հեղինակները՝ ավետարանիչները. *(1 միավոր)*

11. Որտե՞ղ է գտնվում Հայ կաթողիկե եկեղեցու Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի թեմի առաջնորդարանը. (1 միավոր)

12. 1998 թ. ո՞վ վերընտրվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ատենապետ: (1 միավոր)

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Համապատասխանեցնել տիեզերական ժողովի անվանումը այն եկեղեցական գործչի անվանը, որի հայացքները դատապարտեց տվյալ տիեզերաժողովը: (1 միավոր)

- 1) Եփեսոսի
- 2) Կոստանդնուպոլսի
- 3) Նիկիայի

1	
2	
3	

- ա) Արիոս երեց
- բ) պատրիարք Նեստոր
- գ) պատրիարք Մակեդոն

14. Հայոց կաթողիկոսների գահակալման տարեթվերը համապատասխանեցնել նրանց անուններին. (1 միավոր)

- 1) Մովսես Գ. Տաթևացի
- 2) Սիմեոն Ա. Երևանցի
- 3) Հակոբ Դ. Ջուղայեցի
- 4) Ստեփանոս Ե. Սալմաստեցի

- ա) 1763-1780 թթ.
- բ) 1629-1632 թթ.
- գ) 1567-1576 թթ.
- դ) 1655-1680 թթ.
- ե) 1545-1567 թթ.

1	
2	
3	
4	

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Հանրային միասնության հասնելու համար պետք է դաստիարակել առաքինի քաղաքացիներ»: (1 միավոր)

Հին աշխարհի ո՞ր ականավոր մտածողն է բերված խոսքերի հեղինակը:

16. «Ով սիրո մեջ է ապրում, բնակվում է Աստծու մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ»:

Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը: (1 միավոր)

17. «Ընդդեմ Փոքր Ասիայի հայ բնակչության ստեղծված է խաղաղ ոչնչացման մինչև այժմ չտեսնված մի համակարգ: Արդարադատության բացակայությունը, կառավարության կողմից հայ ժողովրդի արդարացի պահանջների լրիվ անտեսումը նրան հանձնել են անբարեխիղճ աստիճանավորների, քուրդ բեգերի և համիդե հեծելազորի լիակատար իշխանությունը»:

1) Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

2) Ո՞ւմ էր ուղղված այդ գրությունը:

(1 միավոր)

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Տրված բացատրություններից ո՞ր երկուսն են սխալ. (1 x 2 = 2 միավոր)

- 1) Տավուշի թեմի առաջնորդանիստը Դիլիջանի ս. Ներսես Շնորհալի եկեղեցին է:
- 2) Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ ս. Գրիգոր Լուսավորիչը Մեծ Հայքում հաստատում է 36 եպիսկոպոսական աթոռներ:
- 3) 1441 թ. իրադարձությունների ժամանակ Աղթամարում գահակալում էր Զաքարիա Գ. կաթողիկոսը, որ գործնականում որևէ աջակցություն չցուցաբերեց կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու գործում:
- 4) 1844 թ. Կոստանդնուպոլսի նորընտիր Մատթեոս պատրիարք Չուխաճյանը հրահանգում է արևմտահայ բոլոր եկեղեցիներում հիշատակել Ամենայն Հայոց հայրապետի անունը, իսկ Ներսես Աշտարակեցին հայրապետական կոնդակով օրհնում է պատրիարքին և հայտնում իր գոհունակությունը:
- 5) 1918 թ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի ներկայացմամբ Ամենայն Հայոց կաթողիկոսը հաստատեց մի շարք կետերից բաղկացած մի «հրահանգ», որով առաջնորդվեցին հայ զինվորական քահանաները Հայաստանի Առաջին հանրապետության բանակի գոյության ողջ ընթացքում:

19. Բերված փաստարկներից ո՞ր երկուսն են ճիշտ. (1 X 2 = 2 միավոր)

(1 X 2 = 2)

- 1) Տերունական տոներից հինգը կոչվում են տաղավար տոներ՝ Սուրբ Ծնունդ, Սուրբ Հարություն (Ս.Զատիկ), Տյառնընդառաջ, Պայծառակերպություն և Սուրբ Աստվածածնի վերափոխում:
- 2) Զոջումից, խոստովանությունից և քավությունից հետո եկեղեցում Հաղորդության խորհրդի միջոցով մարդը թողության է արժանանում, այսինքն՝ ներվում են նրա մեղքերը:
- 3) 1461 թ. Աբրահամ եպիսկոպոսը ճանաչվեց Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի հոգևոր առաջնորդ և նշանակվեց Կ. Պոլսի առաջին հայ պատրիարք:
- 4) Գևորգ Զ. Չորեքյանի ջանքերի շնորհիվ վերաբացվում է Էջմիածնի հոգևոր ճեմարանը, տպարանը, վանքի գրադարանը, կարգավորվում է «Էջմիածին» հանդեսի հրատարակությունը:
- 5) 1970 թ. մայիսին Վազգեն Ա-ն այցելում է Վատիկան և հանդիպում Հռոմի Հովհաննես-Պողոս Բ պապին:

№ 20

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել հավատք որպես քրիստոնեական բարոյականության հիմնական դրսևորումներից մեկը: